ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/07

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով Արման Մանուկյան Ա/Ձ-ի 18.01.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/07 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. Արման Մանուկյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

Արման Մանուկյան Ա/Ձ-ն 18.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ Արման Մանուկյան ԱՁ-ն մասնավոր ընկերություններին մատուցում է հաշվապահական հաշվառման, խորհրդատվական և կազմակերպչական ծառայություններ:

Խորհրդատվական ծառայությունների մատուցման ընթացքում Արման Մանուկյան ԱՁ-ն նաև խորհրդատվություն է ներկայացնում գնումների ոլորտում իրավաբանական անձանց կողմից մասնակցության հայտեր պատրաստելու գործում:

01.09.2016թ. Արման Մանուկյան ԱՁ-ի և Հայարփի Քալանթարյան ԱՁ-ի միջև կնքվել է հաշվապահական ծառայությունների մատուցման պայմանագիր:

Նշված պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Արման Մանուկյան ԱՁ-ն պարտավորվել է մատուցել հաշվապահական հաշվառման, խորհրդատվական և կազմակերպչական ծառայություններ:

Այս պայմանագրի շրջանակներում Արման Մանուկյան ԱՁ-ն օժանդակել է Հայարփի Քալանթարյան ԱՁ-ին պատրաստելու ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «Պատրաստի սննդի մատակարարման ծառայություններ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու մասնակցության հայտ:

Սակայն «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Հայարփի Քալանթարյան ԱՁ-ի մասնակցության հայտը օրենսդրության պահանջների խախտմամբ մերժվել է հետևյալ հիմնավորմամբ.

«ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 20.12.2017թ. թիվ 2 արձանագրության թիվ 3.1 կետի համաձայն՝ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից գնման ընթացակարգին ներկայացված փաստաթղթերը համապատասխանել են հրավերով սահմանված պահանջներին:

Հիմք ընդունելով նույն արձանագրության 5.1 կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցնող ճանաչել «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ին՝ որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Սույն ընթացակարգի շրջանակներում որպես որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր /մասնագիտական փորձառություն/ «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացվել է 23.12.2014թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև կնքված՝ 500 հոգու համար ֆուրշետային ծառայության մատուցման պայմանագիր, 22.12.2015թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև կնքված՝ 500 հոգու համար ֆուրշետային ծառայության մատուցման պայմանագիր, 13.12.2016թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև կնքված՝ 150 հոգու համար ֆուրշետային ծառայության մատուցման պայմանագիր, 13.12.2016թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև կնքված՝ 350 հոգու համար ֆուրշետային ծառայության մատուցման պայմանագիր:

Վերոհիշյալ պայմանագրերի շրջանակներում Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից մատուցվել են պատրաստի սննդի մատուցման ծառայություններ՝ նախաճաշի, ճաշի և ընթրիքի տեսքով:

«ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ ընթացակարգին որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով փաստաթղթեր է ներկայացրել՝ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն: Սակայն նույն արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար, քանի որ չէին համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ֆուրշետային ծառայությունների մատուցումը և պատրաստի սննդի մատուցման ծառայությունները, ըստ գնահատող հանձնաժողովի, տարբեր են և չեն կարող նմանատիպ լինել: Հիմք ընդունելով «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով հրավերի 1 մասի 8-րդ կետի 8.19 ենթակետի 2-րդ պարբերությունը՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Նույն թիվ 3-րդ արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը որոշվել է մերժել և այն համարել է հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Նույն արձանագրության 4.2 կետով գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հիմք ընդունելով «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.19 ենթակետի 2-րդ պարբերությունը Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին տալ մեկ աշխատանքային օր գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունները շտկելու համար:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի ծանուցել Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին, որպեսզի վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկի հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Այնուամենայնիվ նման պայմաններում «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2017թ. թիվ 4 արձանագրության 2.1

կետի համաձայն՝ «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար, քանի որ չէին համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Գնահատող հանձնաժողովը «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացրած նմանատիպ պայմանագիրը գնահատել է անբավարար:

Թիվ 4-րդ արձանագրության 4.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով հրավերի 1 մասի 8-րդ բաժնի 8.13 կետի 4-րդ ենթակետի բ պարբերությունը, մերժել է Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին և առաջին տեղը զբաղեցնող ճանաչելով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվել «Եղվարդի Նեկտար» ՍՊԸ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնհատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնհատվում են անբավարար և մերժվում են»:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին

տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման

արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Ընթացակարգի հրավերի 2.5 կետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ

սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում «Պատրաստի սննդի մատակարարման» ծառայությունների մատուցված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է՝

իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Արման Մանուկյան Ա/Ձ-ն հայտնել է, որ «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի հայտը գնահատելիս՝ թույլ է տրվել մի շարք խախտումներ:

Նախ, Կարգի 47-րդ կետի պահանջների համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով չի ծանուցել առաջին տեղը զբաղեցրած Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Մասնագիտական փորձառության չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար, քանի որ ըստ հանձնաժողովի, դրանք չէին համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ֆուրշետային ծառայությունների մատուցումը և պատրաստի սննդի մատուցման ծառայությունները, ըստ գնահատող հանձնաժողովի, տարբեր են և չեն կարող նմանատիպ լինել: Սակայն Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր ներկայացրած ֆուրշետի ծառայության պայմանագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ պայմանագրերի շրջանակներում Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից մատուցվել են հրավերով նախատեսված համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբի ծառայություն, ինչը Կարգի 65-րդ կետի համաձայն, պատվիրատուի կողմից պետք է գնահատվեր բավարար: Ավելին, կարգի նույն 65-րդ կետի համաձայն՝ հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի)

մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի: Նման պայմաններում գնահատող հանձնաժողովը կարող էր միայն պահանջել պարզաբանում, թե ֆուրշետի ծառայության պայմանագրով կոնկրետ ինչ ծառայություններ են մատուցվել, և տվյալ դեպքում Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն հնարավորություն կունենար ներկայացնելու «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից տրված տեղեկանքներ առ այն, որ ֆուրշետի ծառայության պայմանագրերով Ա/Ձ-ն իրականացրել է նախաճաշի, ճաշի և ընտրիքի ծառայության մատուցում, այսինքն պատրաստի սննդի մատակարարում: Մինչդեռ գնահատող հանձնաժողովը ի սկզբանե ֆուրշետային ծառայությունների մատուցման և պատրաստի սննդի մատակարարման ծառայությունները գնահատել է տարբեր, և ըստ վերջինիս դրանք նույնը չեն:

Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր ներկայացրած ֆուրշետի ծառայության պայմանագրերին կից չի ներկայացվել Կարգի 61-րդ կետով սահմանված պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Մինչդեռ, եթե գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեր Կարգի 61-րդ կետով նախատեսված փաստաթղթի բացակայությունը, և այդ հիմքով կիրառվեր Կարգի 47-րդ կետի պահանջները /շտկել տալու հնարավորությունը/, ապա ընկերությունը կներկայացներ պայմանագրերի պատշաճ կատարումը հավաստող «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից տրված տեղեկանքները առ այն, որ ֆուրշետի ծառայության պայմանագրերով Ա/Ձ-ն իրականացրել է պատրաստի սննդի մատակարարման ծառայություն:

Արման Մանուկյան Ա/Ձ-ն հայտնել է, որ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր ներկայացրած վերը թվարկված պայմանագրերը լիովին համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերի 2.5-րդ կետով սահմանված համանման պայմանագրի՝ պատրաստի սննդի մատակարարման ծառայության պահանջներին: Եվ ավելին, նույն կարգի 65-րդ համաձայն՝ հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է

հոգուտ մասնակցի, ուստի և այս հիմքով նույնպես «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը պետք է գնահատվեր ընթացակարգի հրավերի պահանջներին հապատասխանող:

Միևնույն ժամանակ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.12.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատել է անբավարար, այնուհետև նույն արձանագրության 4.1 կետով որոշել է մերժել Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի հայտը և այն համարվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող: Միևնույն ժամանակ նույն արձանագրության 4.2-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշել է Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին տալ մեկ աշխատանքային օր՝ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունները շտկելու համար:

Ամփոփելով վերոգրյալը, Արման Մանուկյան Ա/Ձ-ն հայտնել է, որ «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 6-րդ հոդվածի 3-ին մասի 2-րդ կետի, 31-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 47-րդ կետի, 61-րդ կետի և ընթացակարգի հրավերի 2.5 կետի պահանջները:

Արման Մանուկյան Ա/Ձ-ն ներկայացված բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

1. Դադարեցնել «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության 4.1 կետով կայացրած՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը մերժվելու և այն հրավերի պահանջներին չհամապատասխանելու որոշումը:

2. Դադարեցնել «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2017թ. թիվ 4 արձանագրության 2.1 կետով կայացրած Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից անբավարար գնահատելու, ինչպես նաև 4.1 կետով վերջինիս հայտը մերժելու մասին որոշումը:

Արման Մանուկյան Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.01.2018թ. ժամը 11:50-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով Խորհրդին ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն 22.01.2018թ. թիվ 6452 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին հայտնել է, որ «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված պայմանագրերում չէին երևում թե ինչպիսի սնունդ է մատուցվել, միայն գրված էր ֆուրշետային ծառայությունների մատուցում իսկ հաշիվ ապրանքագրերում նշված է միայն ֆուրշետ: Ֆուրշետային ծառայություններն ու Ընթացակարգի հրավերով պահանջված պատրաստի սննդի մատակարարման ծառայությունները, որի տեխնիկական բնութագրերում ամեն ինչ շատ հստակ երևում էր թե ինչ ճաշատեսակներ են պահանջվում, շատ տարբեր էին: Գնահատող հանձնաժողովի կողմից որակավորման չափանիշները գնահատվել են անբավարար, քանի որ ֆուրշետային ծառայությունները կարող են շատ սահմանափակ լինել և բնավ ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի պահանջած ճաշատեսակների պատրաստումը և մատուցումը ներառված չլինի ֆուրշետային ծառայությունների ցանկում:

27.12.2017թ. N 3 արձանագրությամբ «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատվել են անբավարար և առաջարկվել է շտկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով հրավերի 1 մասի 8-րդ կետի 8.19 ենթակետի 2-րդ պարբերությունը: Առաջարկվել է շտկել անհամապատասխանությունները՝ ներկայացնել այլ պայմանագրեր, որոնք իսկապես գնահատող հանձնաժողովի կողմից կգնահատվեն որպես նմանատիպ: Իսկ նույն արձանագրության 4.1 կետով մերժվել է մինչ այդ ներկայացրած որակավորման փաստաթղթերը /ֆուրշետային ծառայությունների մատուցման պայմանագրերը/:

ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.01.2018թ. ժամը 11:50-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ պատրաստի սննդի մատակարարման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 2.5 կետի համաձայն՝ Մասնակցին ներկայացվող «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում «Պատրաստի սննդի մատակարարման» ծառայությունների մատուցված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և

դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

3. Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն հայտի N 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետով արձանագրել է, որ Ընթացակարգի առաջին չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն, որպես Ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.12.2017թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն»-ը հիմնավորող փաստաթղթեր ներկայացվել են հետևյալը՝

• 23.12.2014թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև կնքված՝ 500 հոգու համար ֆուրշետային ծառայության մատուցման պայմանագիրը,

• 22.12.2015թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև կնքված՝ 500 հոգու համար ֆուրշետային ծառայության մատուցման պայմանագիրը,

• 13.12.2016թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև կնքված՝ 150 հոգու համար ֆուրշետային ծառայության մատուցման պայմանագիրը,

•13.12.2016թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև կնքված՝ 350 հոգու համար ֆուրշետային ծառայության մատուցման պայմանագիրը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2017թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար, քանի որ չէին համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ֆուրշետային ծառայությունների մատուցումը և պատրաստի սննդի մատուցման ծառայությունները, ըստ գնահատող հանձնաժողովի, տարբեր են և չեն կարող նմանատիպ լինել: Հիմք ընդունելով «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով հրավերի 1 մասի 8-րդ կետի 8.19 ենթակետի 2-րդ պարբերությունը՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

7. Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը որոշվել է մերժել և այն համարել է հրավերի պահանջներին չհամապատասխանող:

8. Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.19 ենթակետի 2-րդ պարբերությունը, որոշել է Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին տալ մեկ աշխատանքային օր գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունները շտկելու համար:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.12.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 2.1 կետով արձանագրել է, որ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար, քանի որ չէին համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Գնահատող հանձնաժողովը Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագիրը գնահատել է անբավարար:

10. Նույն արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին և հիմք ընդունելով հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ բաժնիի 8.13 կետի 4-րդ ենթակետի «բ»

պարբերությունը, առաջին տեղը զբաղեցնող է ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով Արման Մանուկյան Ա/Ձ-ի 18.01.2018թ. բողոքը՝ կից նյութերով, ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի 22.01.2018թ. թիվ 6452 գրությունը՝ կից նյութերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

6. ***Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված փվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:***

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով

նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: ***Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.***

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ***ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.***

4) ***մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:***

Ընթացակարգի հրավերի Մաս I-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում

կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում «Պատրաստի սննդի մատակարարման» ծառայությունների մատուցված լինելը:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ Սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն

արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Այսպես, ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝

պատրաստի սննդի մատակարարման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթ:

Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն հայտի N 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետով արձանագրել է, որ Ընթացակարգի առաջին չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն, որպես Ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.12.2017թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ն ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն»-ը հիմնավորող փաստաթղթեր ներկայացվել են հետևյալը՝

- 23.12.2014թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև կնքված՝ 500 հոգու համար ֆուրշետային ծառայության մատուցման պայմանագիրը,
- 22.12.2015թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև կնքված՝ 500 հոգու համար ֆուրշետային ծառայության մատուցման պայմանագիրը,
- 13.12.2016թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև կնքված՝ 150 հոգու համար ֆուրշետային ծառայության մատուցման պայմանագիրը,
- 13.12.2016թ.-ին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի միջև կնքված՝ 350 հոգու համար ֆուրշետային ծառայության մատուցման պայմանագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.12.2017թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով կայացված որոշմամբ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը

գնահատել է անբավարար, քանի որ չէին համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ֆուրշետային ծառայությունների մատուցումը և պատրաստի սննդի մատուցման ծառայությունները տարբեր են և չեն կարող նմանատիպ լինել: Հիմք ընդունելով «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով հրավերի 1 մասի 8-րդ կետի 8.19 ենթակետի 2-րդ պարբերությունը՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Միևնույն ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության 4.1 կետով կայացրած որոշմամբ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը որոշել է մերժել և այն համարել է հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.19 ենթակետի 2-րդ պարբերությունը, որոշել է Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին տալ մեկ աշխատանքային օր գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունները շտկելու համար:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ***մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը***:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունը կազմվել է Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջի խախտմամբ, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատվել է անբավարար և հիմք ընդունելով «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.19 ենթակետի 2-րդ պարբերությունը՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Միևնույն ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***նույն արձանագրության 4.1 կետով կայացրած որոշմամբ*** Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ ***Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը որոշել է մերժել*** և այն համարել է հրավերի պահանջներին չհամապատասխանող, իսկ նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.19 ենթակետի 2-րդ պարբերությունը, որոշել է Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին տալ մեկ աշխատանքային օր գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունները շտկելու համար, մինչդեռ, Կարգի 47-րդ կետի համաձայն՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ***մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը***, որից հետո նոր միայն Կարգի 48-րդ կետի համաձայն՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Խորհուրդն արձանագրում է, որ ԳԲԽ-ԱՄ-2018/07 բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարը հայտնել է Խորհրդին, որ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից որպես համանման ներկայացված պայմանագրերում չէին երևում թե ինչպիսի սնունդ է մատուցվել, միայն գրված էր

ֆուրշետային ծառայությունների մատուցում, իսկ հաշիվ ապրանքագրերում նշված էր միայն ֆուրշետ:

Հանձնաժողովի քարտուղարը հայտնել է նաև, որ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված ֆուրշետային ծառայության մատուցման պայմանագրերը ի սկզբանե գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են անբավարար, այն հիմնավորմամբ, որ ըստ գնահատող հանձնաժողովի, ֆուրշետային ծառայությունների մատուցումը և հրավերով պահանջվող պատրաստի սննդի մատուցման ծառայությունները տարբեր են և չեն կարող նմանատիպ լինել, իսկ շտկումը Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին տրվել է ոչ թե վերջինիս կողմից ներկայացված ֆուրշետային ծառայությունների մատուցման պայմանագրերում շտկում իրականացվի՝ այլ այն հիմքով, որ ներկայացվի նոր պայմանագրեր, այսինքն՝ պատրաստի սննդի մատակարարման պայմանագրեր, որտեղ նշված կլինի ճաշատեսակները:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր ներկայացված ֆուրշետի ծառայության պայմանագրերի պատշաճ կատարումը հավաստող «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից տրված տեղեկանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ պայմանագրերի շրջանակներում Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից մատուցվել են հրավերով նախատեսված համանման համարվող ծառայություններ:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից որպես Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Մինչդեռ, եթե գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեր Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթի բացակայությունը, և այդ հիմքով կիրառվեր Կարգի 47-րդ կետի պահանջները /շտկել տալու հնարավորությունը/, ապա Հայարփի Քալանթարյանը հնարավորություն կունենար ներկայացնելու պայմանագրերի պատշաճ կատարումը

հավաստող «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից տրված տեղեկանքները, որոնք տրամադրվել էին Խորհրդին բողոքի քննության ժամանակ, որոնց համաձայն՝ ֆուրշետի ծառայության պայմանագրերով Ա/Ձ-ն իրականացրել է համանման ծառայություն, մինչդեռ խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից շտկման հնարավորությունը Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ին տրվել է ոչ թե վերջինիս կողմից ներկայացված ֆուրշետային ծառայությունների մատուցման պայմանագրերում շտկում իրականացնելու հիմքով, այլ այն հիմքով, որ ներկայացվի նոր պայմանագրեր:

Այսպիսով, ամփոփելով վերը նշված փաստերը, Խորհուրդը գտնում է, որ Հայարփի Քալանթարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ վերջինիս կողմից «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում որպես համանման ներկայացված պայմանագրերը բավարարում են Կարգի 65-րդ կետով սահմանված պահանջին, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սույն հիմքով մերժելով վերջնիս հայտը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արման Մանուկյան Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 18.01.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝

1. Պարտավորեցնել «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու նիստի թիվ 3-րդ արձանագրության 4.1 կետով կայացրած Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը մերժելու և այն հրավերի պահանջներին չհամապատասխանելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ՆՀԿ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 29.12.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 2.1 կետով կայացրած «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը անբավարար գնահատելու, ինչպես նաև 4.1 կետով վերջինիս հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ